# CIPR - Հրապարակումների և հիշատակումների ուղեցույց

## Նպատակ

Այս փաստաթուղթը սահմանում է այն **պարտադիր նվազագույն պայմանները**, որոնք պետք է պահպանվեն, երբ CIPR ընկերությունը կամ նրա կրթական նախաձեռնությունները (մասնավորապես «Տիեզերք 1.0» նախագիծը) հիշատակվում կամ ներկայացվում են ցանկացած ուսումնական հաստատության, գործընկեր կազմակերպության կամ մեդիա հարթակի կողմից:

**Ուղեցույցի նպատակն է ապահովել.**

- CIPR-ի ճիշտ և ամբողջական ներկայացումը
- Բրենդի ճանաչելիության պահպանումը
- Տեղեկատվության աղավաղման կամ թերի ներկայացման կանխումը

## CIPR Media & Publication Policy

(CIPR լրատվամիջոցների և հրապարակումների քաղաքականություն)

---

## 1. Պարտադիր հիշատակում CIPR ընկերության մասին

Ցանկացած հրապարակման, հաղորդագրության կամ սոցիալական մեդիա գրառման մեջ պարտադիր պետք է նշվի.

- Ընկերության ամբողջական անվանումը կախված հրապարակման լեզվից՝ **Center for Innovation Promotion and Research (CIPR)** կամ **Նորարարության խթանման և հետազոտության կենտրոնը (ՆԽՀԿ)**
- Ընկերության գործունեության ոլորտը՝ Տիեզերական սարքաշինություն և ինժեներական կրթություն */ aerospace engineering & education*

**Օրինակներ ձևակերպումների համար**

- «Ծրագիրը իրականացվել է **Նորարարության խթանման և հետազոտության կենտրոնի** աջակցությամբ, որը զբաղվում է Տիեզերական սարքաշինությամբ և կրթական նախագծերով»:

- **Նորարարության խթանման և հետազոտության կենտրոնի** ինժեներները ներկայցրեցին **«Տիեզերք 1.0» կրթական փաթեը**, որը …

---

## 2. **«Տիեզերք 1.0» նախագծի պարտադիր նկարագրություն**

Եթե հրապարակումը վերաբերում է **«Տիեզերք 1.0»** ծրագրին, ապա պարտադիր պետք է նշվի.

- Ծրագրի անվանումը՝ **Տիեզերք 1.0 / Space 1.0**
- Ծրագրի բնույթը՝ կրթական փաթեթ / education program
- Նպատակը Զարգացնել տիեզերական սարքաշինությունը Հայաստանում / Develop space engineering in Armenia

**Կարճ օրինակ**
«Տիեզերք 1.0»-ը CIPR ընկերության կողմից մշակված կրթական փաթեթ է, որն ուղղված է դպրոցներում տիեզերական սարքաշինությունը հիմունքների ուսուցմանը:

---

## 3. **Լոգոների օգտագործում**

- CIPR-ի լոգոն պարտադիր պետք է օգտագործվի, եթե հրապարակման մեջ առկա են այլ կազմակերպությունների լոգոներ
- Լոգոն չպետք է.
  - աղավաղվի
  - փոխի գույները
  - կտրվի կամ ձգվի
- Նախընտրելի է օգտագործել պաշտոնական լոգո ֆայլերը (տրամադրված CIPR-ի կողմից)

---

## 4. **Հղումներ և նշումներ**

Հնարավորության դեպքում խորհուրդ է տրվում նշել.

- CIPR-ի պաշտոնական կայքը
  - cipr.am

---

## 5. **Համաձայնեցում հրապարակումից առաջ**

- CIPR-ին վերաբերող ընդլայնված կամ պաշտոնական հրապարակումները ցանկալի է **նախապես համաձայնեցնել** ընկերության պատասխանատու անձի հետ
- Սա վերաբերում է.
  - մամուլի հաղորդագրություններին
  - պաշտոնական էջերում հրապարակումներին
  - զեկույցներին և հաշվետվություններին

## Եզրափակում

Այս ուղեցույցի պահպանումը նպաստում է CIPR ընկերության և նրա կրթական նախաձեռնությունների ճիշտ, պրոֆեսիոնալ և արժանապատիվ ներկայացմանը, ինչը խթանելու է **Տիեզերական սարքաշինության** զարգացմանը Հայաստանում: